ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ

Ռ. Ս. ՂԱԶԱՐՅԱՆ

Հայերենի զարգացման բոլոր փուլերում բառակազմության հիմնական եղանակներն են բառաբարդումը և ածանցումը։ Բառաբարդման միջոցով առաջացած բարդություններն ըստ կառուցվածքային առանձնահատկությունների բաժանվում են երկու հիմնական խմբի՝ հարադրական (կամ վերլուծական) և համադրական։

1. ՀԱՐԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ըստ խոսքամասային արտահայտության լինում են բայական և անվանական։

ա) Բայական հարադրություններ. *սրանք լինում են երկու տեսակ՝ հարադրավոր բայեր և զուգադրական բայեր։*

Հարադրավոր բայեր: *Միջին հայերենում իրենց կենսունակությամբ, բաղադրիչների ներքին կապի ու հարաբերության տարբեր գրսևորումներով աչքի են ընկնում հատկապես հարադրավոր բայերը, որոնց երկրորդ բաղադրիչը (հարադրյալը) միշտ բայ է, իսկ առաջին բաղադրիչը (հարադիրը) կարող է արտահայտվել մյուս խոսքի մասերով, որոնք ըստ կազմության լինում են պարզ, ածանցավոր և բարդ։ Միջին հայերենը վկայում է չափազանց մեծ թվով նորակազմ հարադրավոր բայեր, որոնց մեջ ամենատարածվածը գոյական+բայ կաղապարով կազմված հարադրություններն են։ Այդ տիպի բազմաթիվ հարադրավոր բարդություններից նշենք հետևյալները.* ականջ անել՝ դնել՝ կալ, անուն այնել՝ առնուլ՝ հանել, բարեւ տալ, գլուխն գալ՝ ելնել, դանակ քաշել, երես բե-ել՝ դնել, թագ շալկել, ի շուրջ գալ՝ ծառայ երթալ՝ ընկնիլ, կրակ զարկել, հաշիւ այնել՝ տալ, մշուշ կապել, նագ առնել՝ ծախել, ոտն ելնել, սեղան ածել՝ կազմել՝ տալ, տէր կանգնել, քար կարել:

Իբրև ոչ տարածված երևույթ, գոյական հարադիրները կարող են արտահայտվել թեք հոլովաձևերով՝ ամուսնոյ տալ, ի նաՀապարհէ ելանել, ականովն ընկնել: *Նշելի է, որ գոյական հարադիրներ ունեցող շատ հարադրավոր բայեր, փոխաբերական իմաստավորումներով, ձեռք են բերել դարձվածքների արժեք։*

Գոյական խոսքի մասի հետ համեմատած՝ առավել պակաս գործածություն ունեն ածական+բայ կաղապարով կազմված հարադրությունները։ Այդ կաղապարը ներկայացնող հարադրավոր բայերից են՝ անեղբայր առնել, անխել անկանիլ, արիական կենալ, կենդանի լինել, պարկեշտ կենալ:

Անհամեմատ ավելի են մակբայ+բայ կաղապարով կազմված հարադրավոր բայերը, որոնցից են՝ առտաւ ելնել, դու(ր)ս գալ, ի շտապս լինել, վեր գալ՝ ելնել՝ ձգել՝ յընկնել՝ տալ:

Սահմանափակ թիվ են կազմում այն հարադրավոր բայերը, որոնց հարադիրները կազմված են մյուս խոսքի մասերից՝ դերանուն+բայ, ձայնարկություն+բայ *կաղապարներով, ինչպես՝* յիրար ածել՝ առնուլ՝ բերել՝ գալ՝ տալ, յիր տեղն տալ. երեկ տալ, վայ տալ:

Հարադիրը խիստ հազվագեպ կարող է լինել նաև բայ, ինչպես՝ ի բռոմիլ անել, ի հոսել առնել:

Շատ հաճախ իբրև անվանական հարադիրներ հանդես են գալիս իսկական, բաղհյուսական և կրկնավոր բարդությունները, որոնք, մասնակցելով հարադրավոր բայերի կազմությանը, մեծ մասամբ անկախ գործածությամբ վկայված չեն։ Այդ բարդություններով կազմված հարադրավոր բայերից են՝

ա) իսկական բարդությամբ՝ ամօթերես այնել, գլխակոր լինել, դարամուտ

անել, ի ջրվէք ելնել, կայծակնանար առնել, *բ) բաղհյուսական բարդությամբ՝* աղ ու հաց ուտել, առ ու ծախ անել, կերուխում այնել, յետ ու առաջ անել, *գ) կրկնավոր բարդությամբ՝* ետ ու ետ գնալ, ծակ ծակ այնել, կտոր կտոր առնել, վեր ի վեր ձգել:

Բացի նշված դրսևորումներից, իբրև հարադիր կարող է լինել որևէ կախյալ բայարմատ կամ բառաձև։ Այդ միավորները, սովորաբար չունենալով անկախ գործածություն, հիմնականում վկայված են բայական հարադրությամբ, ինչպես՝ թունդ առնուլ, լաց պանել, նաւան կենալ, մտիկ անել առնել դնել ընել, շուռ ածել՝ գալ՝ տալ, ճարշ գալ, եթ առնել:

Պետք է նկատել, որ միջինհայերենյան բայական հարադրություններում հարադիրները գործածվում են տարբեր բայերի հետ, որոնցից ամենագործունը այնել *(անել, առնել) և* լինել *բայերն են, որոնց հետևում են առավել նվազ կինսունակ բայեր՝* տալ, գալ, առնուլ, գնալ, կենալ, ածել, ելնել, նանել, տանել, դառնալ, ձգել, ընկնիլ *և այլն։*

Միջին հայերենում մի շարք հարադրավոր բայեր, որոնց հարադիրները հատկապես օտար բառեր են, զուգահեռաբար ունեն համապատասխան կամ հոմանիշ համադրական ձևեր, ինչպես՝ ազար առնել և ազարել. Թալան առնել և թալանել, թարկն տալ և թարկել, հոտ առնել և հոտալ, ղալատ անել և ղալատիլ, տնազ առնել և տնազել, փոշիման դառնալ լինել և փոշիմանիլ։ Նկատելի է, որ հարադրավոր բայերի բաղադրիչների տեղը հաճախ փոփոխվում է, այսինքն՝ որպես առաջին բաղադրիչ հանդես է գալիս բայը։ Այս դեպքում բարդության մեջ անվանական երկրորդ բաղադրիչը մեծ մասամբ գործածվում է որևէ նախդրով կամ հոդով՝ ածել զաչք՝ ի գիր, բերել ժամանակն, գալ ի բարեւ, պատռիլ լեղին, տանիլ ի կատար:

Եվ վերջապես, միջինհայերենյան տարբեր տիպի բայական հարադրությունների մեջ հատկապես մեծ թիվ են ներկայացնում այն հարադրավոր բայերը, որոնք կազմված են ի *նախդրով։ Բերենք օրինակներ.* ի բան անցանել՝ գալ՝ երթալ՝ մտնել՝ տալ՝ տանել, ի զինի նստել, ի թիւ ածել, ի նասակ կենալ, ի յարն մնալ. ի սիրտ ելնել՝ նանել, ի վճար բերել՝ գալ, ի քամին գնալ *և այլն։*

Զուգադրական բայեր: *Հարադրավոր բայերի համեմատությամբ, միջին հայերենում առանձնապես մեծ թիվ չեն կազմում զուգադրական բայերը (կամ զուգաբայական հարադրությունները), որոնք սովորաբար դրսևորվում են անկախ գործածություն ունեցող երկու բայերի կապակցությամբ՝ արտահայտելով մեկ ընդհանուր իմաստ։ Սկզբից եթ նշենք, որ զուգադրական բայերը, իբրև բայական հարադրական բարդություն կազմող ձևեր, մի շարք առանձնահատկություններով ու դրսևորումներով հատկապես լայն կիրառություն են ունեցել գրաբարում։ Սակայն միջին հայերենում զուգադրական բայերի դերն ու կշիռը բավական նվազել է՝ պայմանավորված ժամանակի ընթացքում լեզվի բառային կազմի և քերականական կառուցվածքի մեջ կատարված լուրջ տեղաշարժերով։ Փաստերը ցույց են տալիս, որ, ի տարբերություն գրաբարի, միջին հայերենով գրված գործերում զուգադրական բայերն ընդհանուր առմամբ սակավ գործածություն են ունեցել և գերազանցապես հանդիպում են գեղարվեստական գրականության մեջ, հատկապես մի քանի բանաստեղծների՝ Ֆրիկի, Կոստանդին Երզնկացու, Հովհաննես Թլկուրանցու ստեղծագործություններում և Նահապետ Քուչակի հայրեններում։*

Զուգադրական բայերի կազմությանը մասնակցում են բազմատեսակ բայեր, որոնցից իբրև հարադրության առաջին բաղադրիչ առավել գործունեությամբ աչքի են ընկնում երթալ, ելնել, գալ, գնալ, առնուլ||առնել, նանել, տանել, դառնալ *բայերը, որոնք իրենց հերթին այլ բայերի հետ հանդես են գալիս որպես երկրորդ բաղադրիչ։ Միջին հայերենի զուգադրական բայերից են* երթալ աղաչել *(անիծել, ասել, գանկտիլ, դիպնիլ, ելնել, զրուցել, էրիլ, ընկնել, խնդրել, ծեծել, հանել, հասնիլ, մնալ, մտնել||մտնուլ, մեռնալ, նստել, վառիլ, ցուցանել, փնտռել, փորել),* ելնել գնալ *(գալ, երթալ,*

թառել, կանդնիլ, կանչել, կապել, նստել, պարել, փախչել, քալել), գալ մտնել||մանուլ (ասել, դառնալ, ընկնիլ, կանդնիլ, կռուիլ, մարմնանալ, տալ, տանել), գնալ կանգնել (անկանել, գողանալ, լինել, մտնել, քաշել), առնուլ||առնել, գնալ (երթալ, եփել, կախել, վարել, տալ), դառնալ ասել (լնուլ, խփուցել), թոչել հասնիլ (նստել), թողուլ մոռանալ, անցնիլ գնալ, մտնել քաղել, գրկել տանել, կապել կարկամել, մեռնիլ գնալ, իջնել զուցել, ցամքիլ գնալ և այլն։

Պետք է նկատել, որ գրաբարում բավական տարածված են երկուսից ավելի բայերի հարադրությամբ կազմված զուգադրական բայերը, որոնք, սակայն, միջինհայերենյան դրավոր հուշարձաններում հազվադեպ են հանդիպում։ Այդ տիպի զուգադրական բայերից են՝ թողել ելեր գնացել, երկրպագնե անցնիե գնան, խլղաթես առնես գնաս։ Չուտ գրաբարատիպ կազմություն պետք է համարել գործածությունից աստիճանաբար դուրս մղված այն զուգադրական բայերը, որոնց առաջին բաղադրիչն արտահայտվում է անցյալ դերբայով, իսկ երկրորդը՝ խոնարհված ձևերով, ինչպես՝ նրուռեալ զուարճանան, բերկրեալ ցնծան, խոցեալ կսկծի, չեալ գնացին, երթեալ շրջէր, դեգերեալ կենայ։

Զուգադրական բայերը մեծ մասամբ համասեռ բայեր են, որոնք կազմում են կամ շեզուf+շեզուf, կամ ներգործական+ներգործական բայերի միացություն։ բ) Անվանական հարադրություններ. անվանական հարադրությունները նույնպես լինում են երկու տեսակ՝ կրկնավոր բարդություններ և բաղհյուսական բարդություններ։

Կրկնավոր բարդություններ։ Կրկնավոր բարդությունները, որոնք ներկայացնում են տարբեր խոսքի մասերի պատկանող նույն բառի անփոփոխ կամ փոփոխված կրկնությունը իբրև մեկ ամբողջական բաղադրություն, լայն գործածություն ունեն միջին հայերենում։ Խոսքի մեջ կրկնավոր բարդությունները հիմնականում հանդես են գալիս իբրև մակբայ, երբեմն էլ՝ որպես ածական, իսկ որոշ բարդություններ գործածվում են երկխոսքամասային արժեքով՝ մակբայ և ածական։

Խոսքամասային պատկանելությամբ՝ կրկնավոր բարդությունների բաղադրիչներն ըստ նվազող հաճախականության ներկայացնում են հետևյալ կազապարները. ա) գոյական+գոյական՝ ատեն ատեն, բակ բակ, գող ի գող, դրդալ դրդալ, ժամ ժամ, ծով ծով, կաթ կաթ, կտոր կտոր, ճեղք ճեղք, շիթ շիթ, փունջ փունջ, բ) ածական+ածական՝ աժան աժան, բարակ բարակ, դէր գէր, դեղին դեղին, թուխ թուխ, ծուռ ծուռ, մեծ մեծ, չար չար, սեւ սեւ, տաք տաք, գ) մակբայ+մակբայ՝ երբեմն երբեմն, զատ զատ, կրկին կրկին, յուշիկ յուշիկ, շուտ շուտ, դ) թվական+թվական՝ մէկ մէկ, մին մին, ե) դերանուն+դերանուն՝ ինք ընդ ինք||ինքն ընդ ինքն, զ) բայ+բայ՝ աժնել բաժնել, գնալ ու դնալ, զօդված զօդված։

Կրկնավոր բարդությունների բաղադրիչների միջև կարող է լինել որևէ նախդիր կամ շաղկապ, ինչպես՝ զատ ի զատ, երես ընդ երես, ջոկ առ ջոկ, գուն ու գուն, շատ ու շատ, դաս և դաս, քանի ու քանի։

Փոփոխված ձևերով կրկնավոր բարդությունները լինում են տարբեր բնույթի՝

ա) Երկրորդ բաղադրիչի սկզբում կատարվում է բաղաձայնի հավելում, ինչպես՝ աղուշ մաղուշ, աւօտ չաւօտ, քիս մաքիս։

բ) Երկրորդ բաղադրիչի սկզբնաբաղաձայնը փոխարինվում է ուրիշ՝ մեծ մասամբ մ բաղաձայնով. խ>մ՝ խաժ ու մաժ, խակ ու մակ, խատ ու մատ, խուրտ ու մուրտ, ծ>մ՝ ծուռ ու մուռ, թ>մ՝ թուլ ու մուլ, ն>մ՝ ճուկ ու մուկ, ն>մ՝ հօրօտ մօրօտ, շ>մ՝ շոլոր մոլոր, գ>ճ՝ զորով ճորով, ս>փ՝ սուտ ու փութ։

գ) Երկրորդ բաղադրիչի սկզբնաբաղաձայնը առաջին բաղադրիչում ընկնում է, ինչպես՝ աժնել բաժնել, եղնել ու դեղնել։

Բաղհյուսական բարդություններ։ Անվանական հարադրություններից միջին հայերենում առավել տարածված են բաղհյուսական բարդությունները,

որոնք կազմվում են հատկապես նույն խոսքի մասին պատկանող հոմանիշ, հականիշ կամ իմաստով առնչակից բառերի հարադրությամբ՝ կապակցված մեծ մասամբ ու *(երբեմն՝ և) շաղկապով, իսկ առանձին դեպքերում՝ առանց շաղկապի։ Միջինհայերենյան բաղհյուսական բարդությունների մեջ գերազանցապես իշխում են* միավանկ+ու+միավանկ *և ապա՝* միավանկ+ու+ +երկվանկ *բաղադրիչների կաղապարով կազմությունները, ըստ որում, բաղադրիչները գործածվում են երկու ձևով՝ հիմնականում տարանջատ և երբեմն, իբրև բաղհյուսական կցական բարդություններ, միակցված գրությամբ։*

*Բաղհյուսական բարդություններ են կազմվում տարբեր խոսքի մասերից, որոնց մեջ հատկապես գերիշխում են գոյականների (*գոյական+ու+գոյական*), այնուհետև՝ ածականների (*ածական+ու+ածական*) հարադրությամբ կազմությունները, ինչպես՝ ա)* գոյական+ու+գոյական՝ *աղ ու հաց, բեռ ու շալակ, դան ու խոց, դանակ ու շամփուր, ծամ ու վարս, կուժ ու կթխայ, հուր ու բոց, ճորտ ու գերի, շունչ ու հոգի, սար ու ձոր, վեճ ու կռիւ, տուն ու տեղ, փառք ու պատիւ, բ)* ածական+ու+ածական՝ *անշահ ու անօգուտ, բարակ ու նեղ, գէշ ու ղազիր, դառն ու լեղի, լաւ ու աղուոր, խեղճ ու ողորմ, կանաչ ու դեղին, մութ ու մլար, նեղ ու նուրբ, չար ու բարի, պինդ ու ամուր։*

Բաղադրիչների խոսքամասային արտահայտությամբ՝ բաղհյուսական բարդություններ են կազմում նաև՝

ա) թվականները՝ *եօթն ու վեց, քսան ու չորս, երկու երեք, հինգ վեց,*

բ) բայերը՝ *առնուլ և տալ, երթալ ու գալ, կալ ու մնալ, հանել ու տանել, ուտել ու խմել,*

գ) մակբայները՝ *գաղտ ու անգուման, ներքև ու վերև, ուժով ու ճորով,*

դ) ձայնարկությունները՝ *աւաղ ու եղուկ, ափսոս ու վայ, վայ և եղուկ,*

ե) եղանակավորող բառերը՝ *հայ ու չէ։*

Առանձին խումբ են կազմում բայարմատների հարադրությամբ կազմված բաղհյուսական բարդությունները՝ ինչպես՝ անցուդարձ, առ ու փախ, աս ու լիս, ելումուտ, կեր ու խում, ճալումաշ:

Բաղհյուսական բարդությունների կազմությանը մասնակցում են նաև հարակատար և ենթակայական դերբայները, ինչպես՝ ճալած ու քափած, յիստակող և սրբող: *Ինչպես վերը նշվել է, միաժամանակ հանդիպում են առանց շաղկապի զուգորդության բաղհյուսական բարդություններ, որոնցից են՝* աչօք ունօք, ասուն խօսուն, գիշեր ցորեկ, կարմիր սպիտակ, մէկ երկու, փորող բրող:

Բաղհյուսական բարդությունների բաղադրիչներից որևէ մեկը կամ երկուսն էլ կարող են լինել փոխառյալ բառեր, ինչպես՝ ճարամի (<*արաբ.* harāmi) ու մարդըրպան, շէնք ու սուրաթ (<*արաբ.* surat), սար ու թաճ (<*պրսկ.* sar *և* taj):

2. *ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ. միջին հայերենի գրավոր աղբյուրներում վկայված են բազմաթիվ նորակերտ համադրական բարդություններ, որոնք ըստ կազմության լինում են երկու տեսակ՝ իսկական և կցական։*

Իսկական բարդություններ: *Մեկից ավելի բառակազմական հիմքերից բաղկացած իսկական բարդությունները բոլոր տիպի բարդ բաղադրությունների մեջ ամենամեծ թիվն են կազմում և դրսևորվում են բազմազան կաղապարներով։ Ըստ բաղադրիչների՝ սերող և բաղադրող հիմքերի կցման եղանակի իսկական բարդությունները կարող են լինել հոդակապով և անհոդակապ։ Հոդակապի դերով հիմնականում հանդես է գալիս* ա*-ն՝* արքաւածօրք, բազմասիւն. ժանգաշուր, ձիագող, չարասիրտ: *Բարդությունների մեջ* ա *հոդակապից հետո հաճախ գրվում է* յ, *ինչպես՝* թոքայցու, ծիւնայջուր, սպիտակայգոյն: *Բացի հիմնական* ա *հոդակապից, մի շարք բարդություններում հոդակապի դերով հանդես են գալիս* ե||է, ու, ի *ձայնավորները՝* առեճամ||աղէճամ, դանկուկէս, վարդէգոյն, աշխարճիկալ: *Ձայնավորասկիզբ բաղադրող հիմքով իսկական բարդությունները սովորաբար հոդակապ չեն ընդունում, ինչպես՝* աստուածանարգ, բարձրուղէշ, գիշերօք, լուսընծայ:

Բառակազմության պլանում, շեշտափոխության հետ կապված, սերող հիմքի ձայնավորները կրում են հնչյունական փոփոխություններ, որոնք հիմնականում հանգում են հետևյալին.

Ի>(ը) և ի>զրո (սղում, անկում). միավանկ-երկփակ, երկվանկ բառերի փակ վանկի ի-ն՝ գինծ>գնծաջուր, կին>կնագիր, կարմիր>կարմրակտուց, ծաղիկ>ծաղկածաւալ, դեղին>դեղնախունկ||դեղնխունկ։ Միաժամանակ հանդիպում են ի ձայնավորի պահպանման դեպքեր՝ մոխիրջուր, դինծաջուր։

Ի+ա(հոդակապ)>ե||է. երկվանկ բառերի բաց վերջնավանկի ի-ն՝ ագի>ագնտակ||ագէտակ, այգի>այգեպարան, այգեստունկ, բարի>բարեստես, ոսկի>ոսկէհանք։ Նույն հնչյունաշիրքում ի-ն հաճախ պահպանվում է՝ ագիտակ, բարիակրօն, ոսկիաթել։

Ի>ը. միավանկ-վերջափակ ինձ բառի ի-ն՝ ընծանման։

Ա>(ը) և ա>զրո (սղում, անկում). Ադամ<աշմորոի, ասպար<ասպըրդործ։

Ու>(ը) և ու>զրո (սղում, անկում). միավանկ, երկվանկ և բազմավանկ բառերի փակ վանկի ու-ն՝ տուն>տնատեղ, ամուր>ամրակազմ, գլուխ>գլխագիր, գլխաթիւ, գլխակոր, անասուն>անասնապեղծ||անասնապիղծ, արմունկ>արմնկաչափ, մուխ>մխահոտ։

Ու>ը. միավանկ, երկվանկ բառերի սկզբի ու-ն՝ ուխտ>ըխտախաչ, ըխտատեղ, ուղտ>ըղտաբեռն, ըղտապան, ունտ>ընտակեր, ուղեղ>ըղեղնափուլ։

է>ի. միավանկ-վերջափակ և երկփակ, երկվանկ բառերի փակ վանկի է-ն՝ էշ>իշապան, իշառիւծ, գէշ>գիշատես, կէս>կիսաբրաստ, կիսահաս, տէր>տիրախնամ, աղուէս>աղվիսացաւ, հանդէս>հանդիսահրաշ։

ե>ի. միավանկ-երկփակ դեւ բառի ե-ն՝ դիւաբչուչ, դիւադարան։

Իսկական բարդություններին անվանական սերող հիմքը սովորաբար գրվում է ուղղական հոլովով, իսկ ներքին թեքման մի քանի բառերի դեպքում՝ երբեմն կամ հաճախ սեռական-տրական հոլովաձևով, ինչպես՝ ալիւր||ալուր՝ ալիւր-դոյն, ալուրտուն, աշուն-աշնան՝ աշնանամուտ, աշնանատունկ, աստղաստեղ՝ աստեղաշատ, աստեղածին, աստեղակուռ, նուռն-նռան՝ նռանանդիկ։

Ըստ իոսքամասային պատկանելության՝ իսկական բարդությունների սերող և բաղադրող հիմքերը ներկայացնում են հետևյալ կաղապարները.

1. Գոյական+բայարմատ (բայահիմք)։ Այս կաղապարը, որով հիմնականում կազմվում են ածականներ, ինչպես և գոյականներ, ամենագործունն է ոչ միայն միջին հայերենում, այլև գրաբարում։ Տվյալ կաղապարով կազմված բարդություններն ընդհանուր առմամբ արտահայտում են գործողության անվան, ենթակայական և հարակատար դերբայների իմաստ։ Այդ կարգի բաղմաթիվ իսկական բարդություններից հիշատակենք հետևյալները. ախտաշարժ, ասիւսաշէն, բանտատես, գազանաճար, դանկատրծ, երիցսաթաղ, լեռնափակ, խաչապաշտ, ծամակուռ, հաւկիր, հաստարակեր. մոխրաթաւաւ, նիզակաճոճ. ոսկրապատ, ջրախեղդ, սրախոց, վիմաբուխ, տիեզերակործան, ցաւածին, փետկեր, քարամուռ, օձատանջ։

2. Գոյական+գոյական։ Այս կաղապարով կազմվում են գոյական և ածական անուններ, որոնց ճնշող մեծամասնությունը գոյականներ են։ Կաղապարում գոյական բաղադրիչները միմյանց նկատմամբ դրսևորվում են գլխավորապես հատկացուցիչ-հատկացյալի, երբեմն էլ՝ որոշիչ-որոշյալի շարահյուսական հարաբերության մեջ։ Այդ կարգի իսկական բարդություններից են՝ ազնիւսուր. բաժկաման, գարէճաշ, դմակեղ, եղէգնախունկ, զանգակատուն, ոսուանագ. ձիրաման, ճանճաթև, մխաճոտ, պարոնաղուստր, սալորշիր, տղամարդ. քարախրամ, օձաձուկ։

3. Ածական+գոյական։ Այս կաղապարը, որ միջին հայերենում բավական գործուն կառույց է, գերազանցապես կազմում է ածականներ՝ բաղադրիչների որոշիչ-որոշյալի շարահյուսական հարաբերությամբ։ Այդ կաղապարով

կազմվել են նաև մի շարք գոյականներ՝ աղձուկն, բոլորգիր, գոգաբուրդ, դեղճախունկ։ *Նշված կաղապարն են ներկայացնում հետևյալ բարդությունները.* ապաճամիտ, ոտցանոր, գեղեցկաճասակ, դժարախազ, երկայնոստ, թանձրատերև, լայնճամ, ճեզաճոգի, մանրակորիզ, չարանուն, սեւերես, վատձեք, fաջագն։

4. Ածական *կամ* մակբայ + բայարմատ *(բայահիմք)։ Այս կաղապարը, որի բաղադրիչներն արտահայտում են պարագայական հարաբերություն, կազմում է ածականներ՝ հիմնականում ենթակայական և հարակատար դերբայների իմաստով։ Այդ բաղադրիչներով միավորված իսկական բարդություններից են՝* աճագնագոչ, աղէխորով, բազմածաւալ, գարշախնդիր, դիւրաստճ, ճեզաշարժ, մշտաքոր, յարակոծ, նորադարձ, շատախում, չfնաղաշէն, սաստկախօս, վաղաքառամ, ակարատես։

5. Գոյական + ածական։ *Այս կաղապարով կազմվում են դերազանցապես ածականներ, մասամբ էլ՝ մակբայներ։ Դրանցից են՝* աղբախառն, բնանստ, գիւղանման, երեսապարզ, ծայրասուր, մարգադալար, վշտաշատ, տերեւակաճաչ, օդամաfուր։

6. Դերանուն + գոյական։ *Այս կաղապարով կազմվում են ածականներ, իսկ խիստ հազվադեպ՝ գոյականներ, ինչպես՝* ամենածայր, այլաճամ, այլամազ *(գ.)*, ինfնասաճման, նոյնազարմ։

7. Դերանուն + ածական *կաղապարով առաջ են գալիս ածականներ՝* ամենազգոն, ամէներջանիկ, ամէնընտիր։

8. Դերանուն + բայարմատ *(բայահիմք) կաղապարը կազմում է ածականներ՝* այլադաւան, բոլորախօս, ինfնաբուս, ինfնափոր։

9. Ածական + ածական *կաղապարը ներկայացնում է միայն ածականներ՝* բազմամեղուն, գիշախառն, դառնադաօձն, մեծախրոխտ։

10. Ածական + թվական *կաղապարով հանդիպում են խիստ սահմանափակ թվով ածականներ՝* բազմաճազար։

11. Մակբայ + գոյական *կաղապարով ստեղծվում են ածականներ, երբեմն էլ՝ գոյականներ.* արագամտիկ, դեռաճասակ, զգուշակենցաղ, ներfեւտակ։

12. Մակբայ + ածական *կաղապարով խիստ հազվադեպ վկայված են ածականներ՝* մշտաբարի, մշտակաճաչ։

13. Բայարմատ (բայաճիմf) + գոյական *կաղապարով առաջացել են և՛ ածականներ, և՛ գոյականներ՝* արգելաշունչ *(ա.)*, ելասեղf *(դ.)*, արածէտեղ *(գ.)*։

14. Թվական + գոյական *կաղապարով կազմված բարդությունները գործածվում են ածականի, մասամբ էլ գոյականի և մակբայի խոսքամասային արժեքով՝* բիւրապետ *(գ.)*, եռախորան, երեfգլխի, երկագմբէթ, եօթնասիւն, ճարիւրապարգեւ *(ա. մ.)*, չորեfվտակ, վեցակողմ, fառանիշ։

15. Թվական + բայարմատ *(բայահիմք) կաղապարով վկայված են ածականներ՝* բիւրոնբաց, եռատոճ, երկոբաժան, եօթնալիր, fառաբու(ղ)խ։

16. Թվական + ածական *կաղապարով խիստ հազվադեպ կազմվում են ածականներ՝* եռաբշուառ։

Միջին հայերենում իսկական բարդություններից շատերը, չունենալով անկախ գործածություն, իմաստի կոնկրետացում են ստանում միայն տարբեր ածանցների միջոցով և հարադրավոր բայերի մեջ, ինչպես՝ աշխարճավաօառութիւն *«առևտուր, վաճառք»*, դարամուտ անել *«վնաս տալ՝ բերել՝ պատճառել»*, թանձրամաղձոտ *«շատ մաղձոտ»*, նետախորով առնել *«նետահարել»*, շատաբանիլ *մանրամասն խոսել՝ գրել՝ նկարագրել»*։

Ավելորդ չէ նշել, որ տարբեր տիպի իսկական բարդությունների գոյականով կամ ածականով արտահայտված առաջին բաղադրիչը կարող է լինել փոխառյալ բառ, ինչպես՝ մասարաfար *«ծիթաղացի քար»* (<*արաբ.* masara) շիրինզրուց *«քաղցր զրույց անող, քաղցրախոս»* (<*պրսկ.* širin), սինօռապաճ *«սահմանապահ»* (<*հուն.* synoros):

Իհարկե, միջին հայերենում իսկական բարդությունները գերազանցապես երկբաղադրիչ կազմություններ են, որոնց հետ երբեմն հանդիպում են եռաբաղադրիչ, մասամբ և քառաբաղադրիչ բարդություններ, ինչպես՝ այծեղջիուռածագ, բազմադիմահանճար, գերահիրաշափառունակութիւն, երկոտասանալուսնեայ, հorfվերորդի, վատոյժկեղեւ, վեցհազարագուն:

Եվ վերջապես, եթե հաշվի չառնենք հնչյունափոխական որոշ դեպքեր (և վերջահնչյունի անկում, հնչյունների հավելում, ա հոդակապի սղում), ապա անվերապահորեն կարող ենք ասել, որ միջինհայերենյան իսկական բարդությունների առաջին նդրում հանդես եկող ձևույթները (արմատներ, բառեր) քառաբարդության մեջ դրսևորվում են զրաբարում գործող բառակազմության կայուն օրինաչափությունների համաձայն։

Կցական բարդություններ: Կցական բարդությունները, որոնք առաջ են գալիս հարադրական բարդությունների բաղադրիչների և շարահյուսական տարբեր կապակցությունների սերտ միացումով, իսկական բարդությունների համեմատությամբ մեծ թիվ չեն կազմում։ Պետք է ասել, որ միջին հայերենում գործածական կցական բարդությունների մեծագույն մասը իր վրա կրում է բարբառային կնիք։ Անկասկած, կցական բարդություններից շատ շատերը կենսունակ են եղել ժողովրդախոսակցական լեզվում և բարբառներում, որտեղից անմիջականորեն ներթափանցել են գրավոր աղբյուրների մեջ։

Միջին հայերեսում զգալի թիվ են կազմում հատկապես որոշիչ-որոշյալ, հատկացուցիչ-հատկացյալ, ենթակա-ստորոգյալ շարահյուսական կապակցություններից առաջացած կցական բարդությունները։ Դրանցից են՝ աղբօրորդի, այդցեղ||այտցեղ «այդպես», այլուայր||այլուվայր||այլվայր||այլվի «նորից, դարձյալ, հետս», այնչափ||հայնչափ||հանչափ «այնչափ, այնքան», այնտեղ, աւաղէրեց, դարիվեր, էնպէս, ինչուր||ինչուրվի||ինչվի «մինչև», իսկի, կէսօր, հանցգուն «այնպիսի», ինքարաց «իրար հետ, միասին», հorfուր, մէկուկէս, մէկտեղ, յանչափ, չորսհարիւր, ցուր «մինչև, մինչև որ», fսաներեf:

Միջին հայերենում բավական տարածված կազմություններ են անվանական և բայական կրկնավորներով կցական բարդությունները, որոնց մեջ կրկնավորները հանդես են գալիս անփոփոխ կամ հնչյունափոխված ձևերով։ Այդ կարգի կցական բարդություններից են՝ բլբլակ «փլփլված, խարխուլ», գունգգուն, դոզդոզաց, երեւան, գատէգատ, խազխազել, յսայտամայտ, ծոմռել, կէսուկէս, շրջմրջել, վազվզել, տէրտէր, ցեղուցեղ, փրցփրցուն «երերուն, անհաստատ», fաշմշել||fարշմշել: Միջին հայերենում համեմատաբար քիչ են հարադրավոր բայերից առաջացած կցական բարդությունները, որոնցից շատերը, լինելով ակնհայտ խոսակցական-բարբառային կազմություններ, իբրև առանձին հարադրավոր բայեր վկայված չեն գրական աղբյուրներում։ Հարադրավոր բայերից առաջ եկած կցական բարդություններից են՝ առջընդրել, «նախապես՝ կանխապես իմանալ», գլխիկորիլ, դեղդրել, երկիրպագել, ձեռնդնել, ձեռնաալ՝ «ոնշանվել»։

Ի վերջո, միջին հայերենը վկայում է բնաձայնական բայական կրկնավորներով կազմված մի շարք կցական բարդություններ, որոնց մեծամասնությունը, իբրև բարբառային բնույթի կազմություն, կայունացել է նաև գրական լեզվում։ Բնաձայնական կրկնավորներով առաջացած կցական բարդություններից են՝ գոգոալ, խոխոալ, կշկշալ, ճռճռալ, ճվճվալ, փսփսալ, fրfրռալ, կոկոալ:

Բառակազմության երկրորդ հիմնական եղանակը՝ ածանցումը, իրացվում է բառակազմական հիմքերին ավելացնելով մեկ կամ մեկից ավելի ածանց։ Ըստ հիմնական ձևույթի նկատմամբ ունեցած դիրքի՝ ածանցներն ընդհանրապես բաժանվում են երկու խմբի՝ նախածանցներ և վերջածանցներ։

Նախածանցներ. ըստ իմաստային գործառության, լինում են երկու տեսակ՝ ժխտական և ոչ ժխտական (հաստատական)։ Ժխտական են հայերենի բուն նախածանցները՝ ան, ապ, դժ, ա, չ: Ոչ ժխտական են հունաբան դրպրոցի ներկայացուցիչների կողմից ստեղծված նախածանցները՝ անդր, առա, բաղ, բաց, գեր, դեր, ենթ, հակ, հոմ, մակ, յար, ներ, շաղ, շար, պար, սուր, վեր, տար, տրամ, փաղ, փար, փոխ:

Միջինհայերենյան շրջանում բուն ժխտական նախածանցներից գործունը միայն ան- նախածանցն է, որը կազմում է հիմնականում ժխտական կամ բացառողական իմաստով ածականներ, մասամբ էլ՝ մակբայներ։ Այդ նախածանցով միջին հայերենում վկայված է շուրջ 370 բառ, որոնցից են՝ անաուն, անակն, անաղերս, անասպար, անբախտ, անբեկ, անգերան, անուանակ, անեբես, անզղջալի, անխաղաղ, անծառ, անկարգ, անկուշտ, անձեռ, ասնարակ, անմազ, անյարգի, անշանսուտ, անսնունդ, անվիզ, անտէր, անփեռուտ։ Նշելի է, որ աս- նախածանցով կազմված մի շարք բառերի սերող հիմքերը փոխառյալ բառեր են, ինչպես՝ անղալատ «անսխալ, անթերի» (<արաբ. galat), անշալունջ «առանց զանգատի, անգանդատ, անբողոք» (<ֆր. chalonge), անսաիտ «թամբ չունեցող» (<պրսկ. saxt)։

Մյուս ժխտական նախածանցներից, որոնցով միջին հայերենում կազմվել են մի քանի նոր բառեր, պետք է նշել չ-, ա- և ապ- նախածանցները, իսկ դժ- նախածանցն ընդհանրապես գործառում չի ունեցել։ Այդ նախածանցներով կազմված բառերից են՝ չբեր, չգէա, չերեց, չէ, չուանեար, չպիանլի, ոխաղծ «ոչ խելահաս, տհաս», ոբուն, ապամորթ «անմորթ, առանց մորթու», ապիգովել։ Ինչ վերաբերում է հունարենի հետևողությամբ ստեղծված շուրջ երկու տասնյակ նախածանցներին, ապա պետք է ասել, որ դրանք գործառական լայն ընդգրկում չեն ունեցել։ Դրանցով կազմված բառերն անհատական բնույթի նորակազմություններ են և սովորաբար եզակի վկայությամբ հանդիպում են միայն գրաբարով գրված մի քանի արձակ և չափածո գործերում։ Այդ խմբի որոշ նախածանցներ (բաղ-, դեր-, տրամ-, փաղ-, փար-) բառակազմական գործառույթով ընդհանրապես հանդես չեն եկել։ Գործունեության տեսակետից կենսունակ չեն եղել անդր-, արտ-, բաց-, ենթ-, ճամ-, հոմ-, մակ-, սառ-, փոխ- նախածանցները, որոնցով կազմվել են սահմանափակ թվով բառեր, ինչպես՝ անդրաշրջական, արտաքայլել, բացափայլումն, ենթամնայ, ճամաթշուտ, հոմանիշտակ, մակերևակ, սառոյօդել, փոխնատուցել։

Միջին հայերենում համեմատաբար գործուն են գեր-, նախ-, ներ-, շար-, ոչար-, վեր-, տար- նախածանցները, որոնցով վկայված են զգալի թվով նոր բառեր։ Դրանցից են՝ գերարուղխ, գերալուր, նախագանական, նախանուշ, նախաբանեան, նեռարհետ, ներնմուտ, շարանիտել, պարածածկ, վերաբուշխ, տարագիծ։

Միջին հայերենում բառակազմական դերով հատկապես աչքի են ընկնում վերջածանցները, որոնց մեծ մասը գործածական է եղել դեռևս գրաբարում։

Պետք է նկատել, որ միջինհայերենյան շրջանում գրաբարի վերջածանցների կազմում տեղի էին ունեցել որոշ տեղաշարժեր, որոնք ընդհանուր առմամբ հանգում են հետևյալին.

ա) Մի քանի վերջածանցներ, հատկապես նվազափաղաքշականները, դարձել են խիստ կենսունակ՝ ընդգրկելով անհամեմատ ավելի մեծ թվով կազմություններ։ Դրանցից են՝ -ած, -այ, -(ա)որ, -ենի, -ի, -ոտ, -ակ, -ուկ։ Օրինակներ՝ խաբած, ոռնայ «գողուն», նեռաուոր, դեղենի. ուղտենի. պարոնի «հայրենի, պապենական», փշատի, իսկի, պաշտելի, քարոտ, արծվակ, գունկ, ձագուկ։

բ) Հնչյունափոխական երևույթներով պայմանավորված՝ երևան են եկել նոր վերջածանցներ, որոնցից են՝ -(ա)գան (<ագոյ), -(ա)ծու (<ածոյ), -ել (<եալ), -եկ||-էկ (<եակ), -է (<եայ), -ում (<ումն), -ուց (<ոյց)։ Օրինակներ՝ ծերագան, տաշածու, մեռել, ճայեկ, գարէ, ջարդում, ճանգուց։

գ) Հանդես են եկել բոլորովին նոր վերջածանցներ, ինչպես՝ -(ա)ծոտ, -աշ, -եր, -եան, -ժեռ, -կեկ, -ման, -ոշ||օշ, -ովի, -ուր, -ուն, -ունց, -չէ||-չէք (չեայ>չէ-ք), -փառ։ Օրինակներ՝ նենգծոտ, մատղաշ, խներ «մեղրամոմ, չեչ», գունեան «գույնզգույն», կարմ(ի)ռժեռ «կարմրավուն», ծանարկեկ, կանգման, կշոշ «էտոց», գեղովի, մորութ «ծնված օրից ի վեր», բրդուն, պրաղուց, խոտշէք, կանաչափառ «կանաչավուն»։

Արդ, միջին հայերենում վերջածանցման կաղապարներից ամենագործունը պարզ հիմք (անվանական կամ բայական)+մեկ վերջածանց կաղապարով կազմություններն են, որոնք ներկայացնում են բոլոր ածանցավոր բարդությունների ճնշող մեծամասնությունը։ Ըստ գործածականության, հաջորդ տեղում են ածանցավոր հիմք+վերջածանց կաղապարով կազմությունները։ Այս դեպքում ածանցաձոր հիմքի երկրորդական ձևույթները կարող են լինել առաջադիր կամ մեծ մասամբ վերջադիր, ինչպես՝ ան-սխալ+ -ական, իմաց-ող+ -ապէս, լուս-ատր-չ+ -ութիւն։ Վերջածանցման բարդ հիմք+ +վերջածանց կաղապարով կազմվում են բարդածանցավոր բառերը, որոնց հիմքերը կարող են ունենալ մեկ կամ մեկից ավելի երկրորդական ձևույթներ, ինչպես՝ աղուհաց+ -եան, երկնաքաղաք+ -ական, թանձրամաղձ+ -ոտ, ան-ձեանհաս+ -ութիւն։

Միջին հայերենի բառակազմության մեջ նշանակալից դեր են խաղացել -ել, -ալ, -ալ բայական ածանցները։ Այդ ածանցներով խոսքի տարբեր մասերից, ածանցող հիմքերից կազմվել են բազմաթիվ պարզ և ածանցավոր բայեր, որոնց մի մասը, անկասկած, նորակազմություն է, իսկ ընդհանուր մեծամասնությունը գործածական է եղել մոլորդաթուսակցական լեզվում և բարբառներում։ Մյուս կողմից՝ զգալի թվով բայեր գալիս են գրաբարից, որոնց, կրելով տարբեր բնույթի հնչյունափոխություններ և բայափոխություններ, դարերի մեջ [illegible] կազմություններ։ Այդ կարգի բայերից են՝ աղտել (<դր. աղաւտել), այնել||այրնել||անել||արնել (<առնել), հարցնել||հարցնուլ (<հարցանել), ճանաչել||ճանչել||ճանչեցնել||ճանչնալ (<ճանաչել), տեսնալ||տեսնել||տեսնալ (<տեսանել), քալել (<քայլել) և այլն։

Միջին հայերենում բայակերտ ածանցներից, ըստ գործածականության, ամենուկենսունակը -ել ածանցն է։ Գործառական տեսակետից հաջորդ տեղն է գրավում -ի ածանցը, որը կարծես թե սկսել էր կազմանալ միջին հայերենում՝ իբրև ի լծորդության չեզոք բայերի ածանց։ Միջին հայերենում, նախորդ ածանցների համեմատությամբ, նվազ կենսունակ է -ալ ածանցը, որով կազմված բայերը քանակապես աչքի չեն ընկնում։ Ս. լծորդության ածանցավոր բայերի կազմությանը մեծ մասամբ մասնակցում է գրաբարաձև -անալ (ան-ալ) ածանցը, որը շատ հաճախ հանդես է գալիս -նալ հնչյունափոխված ձևով, ինչպես՝ աղէկանալ||աղէկնալ, արձականալ||արձակնալ, դիմանալ||դիմնալ, տաքանալ||տաքնալ։

Ինչ վերաբերում է -ալ ածանցին, ապա պետք է ասել, որ այն արդեն գտնվում էր վերացման եզրին, չնայած այդ ածանցով դեռևս հանդիպում են մի շարք բայական կազմություններ՝ հիմնականում պայմանավորված դրարարի և բարբառների ազդեցությամբ, ինչպես՝ արբնալ, զանալ, դալնալ, եղնալ, զարկնալ, ընկնալ, թռնալ, իջնալ, ծիծաղալ, հագնալ, հարցնալ, մրտնալ։

Բացի նշված բայակերտ ածանցներից, միջին հայերենում բառակազմական գործուն դերով հանդես է եկել վ (ու, ւ) ածանցը, որը մասնակցել է կրավորական բայերի ձևավորմանը, ինչպես՝ զարդուել, թացվիլ, խառնվիլ, պոակվիլ, սանդրվիլ, ցրվիլ, փռուիլ, քերվիլ։

Նոր բայերի կազմավորման գործում հանդես են եկել բայածանցների չորս խումբ՝

ա) Սոսկածանցներ՝ աե, եե(էե), ե, չ։ Գրաբարյան աե ածանցով բայերի ա-ն ընդհանրապես սղվում է, ինչպես՝ ամրեալ (ամրանալ), գաեել (գտանել), մաեել||մաեալ (մտանել), օծեել (օծանել)։

Եե ածանց ունեցող բայերում նկատելի են ե-ի սղման մի քանի դեպքեր, ինչպես՝ գիտեեալ||գիտեալ, կարեեալ||կարեալ, վախեեալ||վախեալ։

Ե ածանցը առկա է սահմանափակ թվով բայերի մեջ, ինչպես՝ թողեալ, թռեալ, կալեալ||կալեել։

Միջին հայերենում չ ածանցով վկայված բայերից են՝ այաչիլ, բաչիլ, դպչիլ, խոռչիլ||խրտչիլ, վառչիլ, փակչիլ։

բ) Պատճառական՝ ցն (ացն, եցն, ուցան)։ Միջին հայերենում լայնորեն տարածված են պատճառական բայերը, որոնք հիմնականում կազմվում են չեզոք, մասամբ էլ՝ ներգործական սեռի բայերից։ Միջինհայերենյան պատճառական բայերից են՝ ալեւռացնել, աղուռցնել, րուրրուացնել||րուրրուեցնել, դիժարացնել, զովացնել, ծուլացնել, ճազցնել, ձանձրացնել, մարսեցնել, պաղեցնել, սաճեցնել, վատուժցնել, տափկեցնել, ցուցնել, քայլեցնել, օտարացնել։ Առավել պակաս հաճախականությամբ պատճառական բայերը հանդես են գալիս գրաբարյան -ուցան ածանցով, ինչպես՝ աներկիւղացուցանել, դեղնեցուցանել, խմեցուցանել, կշտացուցանել, փռեցուցանել։

գ) Կրավորական՝ վ (ու, ւ)։ Սահմանափակ գործածությամբ հանդես է գալիս իբրև կրավորական սեռի ցուցիչ, ինչպես՝ բաժնվիլ, խեղդվիլ, ծիթվիլ, տուժվիլ։

դ) Բազմապատկական՝ ատ, ոտ, տ: Միջինհայերենյան կազմություններում ածանցների ա և ո ձայնավորները կարող են սղվել։ Վկայված բազմապատկական բայերից են՝ բաշխատել, բզկտել, խածտել, խոցատել||խոցտել, կոտրտել, կտրտել, ներձտել, ճեղfտել, սպառատել, սխալատել։

Բացի հիշյալ բազմապատկական ածանցներից, բայակազմության մեջ հանդես են գալիս գործողության սաստկության և կրկնակիության երանգ ունեցող մի քանի ածանցներ, որոնցով վկայված բայերը ժողովրդախոսակցական ու բարբառային բնույթի կազմություններ են։ Այդ կարգի ածանցներից են՝ -խ՝ մշխել «տրորել, խառնել», -կ՝ գճկիլ «ծնկի վրա գալ, չոքել», լողկանալ, խոյկել, -կլտ՝ ճեծկլտալ, -կտ՝ թալկտիլ, ծռկտիլ, ճմլկտալ, ճռճկտալ, -ռ՝ բշտըռել, թարխռիլ «թարախակալել», խոցռել, -f՝ չարչfել «չարչարել, նեղել», grfել «գրել, տարածել, սփռել»։

Եվ վերջապես, հարկ է նշել, որ հաճախ բայերի ածանցող հիմքերը փոխառյալ բառեր են, ինչպես՝ բլայթել «դատ վարել, դատարանի առաջ իր դատը պաշտպանել» (<հֆր. plaid), թալանել «կողոպտել» (<թթր. talān), մալուլել «տրտմել, տխրել, վհատվել, շփվարել» (<արաբ. malul), չալիշել «կռվել, մարտ վարել» (<պրսկ. čaleš) և այլն։

К СЛОВООБРАЗОВАНИЮ В СРЕДНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Р. С. КАЗАРЯН

Резюме

Из глагольных сложных слов в среднеармянском языке в количественном плане выделяются аналитические глаголы, по сравнению с которыми количество сопоставительных глаголов незначительно. Из именных сложных слов—повторов и соединительных—наиболее распространены соединительные. Среди различных типов сложных слов самое большое количество составляют собственно сложные слова, состоящие из более чем одной словообразующей основы и выявляющиеся в разнообразных моделях. Значительная часть соединительных сложных слов несет на себе печать диалектизмов.

В среднеармянском языке словообразующая роль суффиксов, большая часть которых употреблялась еще в древнеармянском, по сравнению с префиксами была более значительной. В то же время в словообразовании значительную роль играли глагольные аффиксы.